



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ
ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ 20-ԱՄՅԱ
ՀՈԲԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

2015թ. հուլիսի 18-ին Երեւանի պետական կամերային թատրոնում Երեւանի մամուլի ակումբը նշեց հիմնադրման 20 ամյակը, որի շրջանակներում տեղի ունեցավ [ԵՄԱ ամենամյա մրցանակի](#) հանձնման արարողությունը: ԵՄԱ մրցանակը սահմանվել է 1998թ. եւ տրվում է Հայաստանի լավագույն լրագրողներին, ՋԼՄ-ներին եւ մեդիա կազմակերպություններին: 2005 թվականից ի վեր ԵՄԱ վարչությունը ավանդույթ է ձևավորել՝ շնորհելու նաեւ անվանական մրցանակներ կյանքից անժամանակ հեռացած այն գործընկերների հիշատակին, որոնք կազմակերպության կայացման եւ զարգացման գործում մեծ ավանդ են ունեցել. [Վալերի Այդինյան, Տիգրան Նաղդայան, Ռուբեն Մանագասարյան, Արմեն Նիկողոսյան:](#)

Երեւանի մամուլի ակումբի 2014-2015թթ. մրցանակակիրներ

Վալերի Այդինյանի անվան մրցանակ



Վահրամ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, գրող, հրապարակախոս՝ Lragir.am կայքի «Կիրակնօրյա նոթեր» հրապարակախոսական շարքի համար: Մրցանակը հանձնեցին ԵՄԱ վարչության անդամ, մեդիա փորձագետ Մեսրոպ Հարությունյանը եւ Վալերի Այդինյանի դուստրը՝ Ելենա Այդինյանը:

Տիգրան Նաղդալյանի անվան մրցանակ



Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա»

հեռուստաընկերության «Ժամը» լրատվականի գլխավոր խմբագիր՝ խմբագրական հմուտ ձեռագրի համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ խորհրդի անդամ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն Նունե Սարգսյանը:

Ռուբեն Մանգասարյանի անվան մրցանակ



Վահրամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, «Տոտոլուրի» թղթակից՝ 2015թ. հունիսի «Էլեկտրիկ Երեւանի» ամենատպավորիչ լուսանկարի համար: Մրցանակը հանձնեց Ռուբեն Մանգասարյանի եղբայրը՝ «Պատկեր» ստուդիայի տնօրեն Տիգրան Մանգասարյանը:

Արմեն Նիկողոսյանի անվան մրցանակ



Վերա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, մարզական լրագրող՝ մարզաշխարհի հանդեպ թարմ հայացքի եւ բազմակողմանի մոտեցման համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ վարչության անդամ, գերմանական «Դոյչե Վելլե» մեդիա ընկերության հայաստանյան թղթակից Աշոտ Գազազյանը:

Համայնքների ֆինանսիստների միավորման եւ Երեւանի մամուլի ակումբի մրցանակ



Սառա ՊԵՏՐՈՍՅԱՆ, «Հետք» առցանց թերթի լրագրող՝ տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումները լավագույնս լուսաբանելու համար: Մրցանակը հանձնեց Համայնքների ֆինանսիստների միավորման նախագահ Վահան Մովսիսյանը:

ԵՄԱ մրցանակ



Արզուման ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Առողիտ-վիզուալ լրագրողների ասոցիացիայի» նախագահ՝ հանրային կարեւորություն ունեցող խնդիրները ֆիլմերում եւ սոցիալական գովազդի ժանրում լավագույնս ներկայացնելու համար: Մրցանակը հանձնեց Երեւանի մամուլի ակումբի փորձագետ, ԵՄԱ ամփոփագրի խմբագիր Արեւհատ Գրիգորյանը:

ԵՄԱ մրցանակ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ



Ավետ ԴԵՄՈՒԳՅԱՆ, ԵՄԱ փոխնախագահ, Հայաստանում «Ասոշիեթեդ պրես» լրատվական գործակալության թղթակից: Մրցանակը հանձնեց ԵՄԱ փորձագետ Արմինե Սուքիասյանը:



Զավեն ԽԱՉԻԿՅԱՆ, ԵՄԱ անդամ, Ֆոտոթրեյնինգի կենտրոնի հիմնադիր եւ ղեկավար: Մրցանակը հանձնեց ազատ ֆոտոլրագրող Գերման Ավագյանը:

ԵՄԱ-ի հետ արդյունավետ համագործակցության համար մրցանակ



«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» հեռուստարնկերություն: Մրցանակը հանձնեց Երեւանի մամուլի ակումբի խորհրդի անդամ, ԵՄԱ խմբագիր Հերիքնազ Հարությունյանը:



ՖՐԻԴՐԻԽ ԷԲԵՐՏ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ հայաստանյան գրասենյակ: Մրցանակը հանձնեց Երեւանի մամուլի ակումբի վարչության անդամ, Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի արտաքին կապերի պատասխանատու Վիգեն Սարգսյանը:



«ԱՐԹՈՒՐՍ ԱՂՎԵՐԱՆ ՌԻԶՈՐԹ» հանգստյան տուն: Մրցանակը հանձնեց Երեւանի մամուլի ակումբի վարչության անդամ, ԵՄԱ գործադիր տնօրեն Միխայիլ Դիլոյանը:



ԵՎՐԱՄԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ: Մրցանակը հանձնեց ԵՄԱ ծրագրերի համակարգող Հայկակ Արշամյանը:



ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ: Մրցանակը հանձնեց ԵՄԱ ֆինանսական մենեջեր Լիանա Կոստանդյանը:



ԽՈՍՔԻ ԱԶՍՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ: Մրցանակը հանձնեց ԵՄԱ փորձագետ Սեդա Շիզանյանը:



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ:

Մրցանակը հանձնեց ԵՄԱ վարչության անդամ,
«Սինոփսիս Արմենիա» ընկերության հանրային
կապերի ղեկավար Գայանե Մարկոսյանը: